ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024 թվականի մայիսի 28-31-ը Ալբանիայի Հանրապետություն /Տիրանա/ կատարած գործուղման արդյունքների մասին

1.Անունը,ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝

Ստեփան Մնացականյան, ՀՀ վիճակագրական կոմիտեի նախագահ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Ալբանիայի Հանրապետություն (Տիրանա), 2024թ. մայիսի 28-31-ը

3.Հրավիրող կողմը՝

Եվրոպական ազատ առևտրի ասոցիացիա (EFTA)

4.Գործուղման նպատակը՝

Մասնակցել «UNECE/EFTA Վիճակագրական օրենսդրության մոդեռնիզացում» խորագրով սեմինարին:

Սեմինարի նպատակներն էին.

- Տրամադրել հարթակ ազգային և միջազգային փորձագետների համար՝ պաշտոնական վիճակագրության իրավական և ինստիտուցիոնալ շրջանակների մոդեռնիզացման լավագույն փորձը կիսելու համար
- Քննարկել ի հայտ եկած խնդիրները, որոնք իրավական մարտահրավերներ են ներկայացնում ազգային վիճակագրական համակարգերի համար
- Արտացոլել և հավաքել պատկերացումներ վիճակագրության օրենսդրության մոդեռնիզացման վերաբերյալ Եվրոպական վիճակագիրների կոնֆերանսի (CES) ուղեցույցի և «Պաշտոնական վիճակագրության մասին» մոդելային օրենքի օգտագործման վերաբերյալ՝ ազգային վիճակագրական օրենքների և հարակից այլ օրենսդրության վերանայման, ինչպես նաև ի հայտ եկած խնդիրների և ապագա վերանայումների լավ փորձի վերաբերյալ:
- Բացահայտել, թե ինչ այլ օժանդակ նյութեր և գործնական ուղեցույցներ են անհրաժեշտ վիճակագրական օրենսդրությունն ամրապնդելու և այն արդյունավետորեն կիրառելու համար:

Հանդիպումն ուղղված էր ազգային վիճակագրական գրասենյակների և միջազգային կազմակերպությունների փորձագետներին, որոնք հետաքրքրված են պաշտոնական վիճակագրության իրավական դաշտի ամրապնդմամբ և տվյալների հասանելիության և կառավարման իրավական ասպեկտներով:

Սեմինարը կազմակերպվել էր ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի (UNECE) վիճակագրական օրենսդրության ղեկավար խմբի, ներառյալ Ալբանիան, Հայաստանը, Հունաստանը, Իռլանդիան, Լատվիան, Նորվեգիան, Լեհաստանը, Իսպանիան, Միացյալ Թագավորությունը, EFTA-ն, Եվրամիության վիճակագրական ծառայությունը (Եվրոստատ), Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը (OECD), ՄԱԿ-ի վիճակագրության բաժինը (UNSD) և UNECE-ն՝ EFTA-ի աջակցությամբ և հյուրընկալվելով Ալբանիայի վիճակագրության ինստիտուտի (INSTAT) կողմից:
Հայաստանը՝ ի դեմս Վիճակագրական կոմիտեի նախագահ Ս. Մնացականյանի և ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ - Կոմիտեի նախագահի տեղակալ Ա. Սաֆյանի, մասնակցել է «Պաշտոնական վիճակագրության մասին» մոդելային օրենքի մշակման աշխատանքներին և հանդիսանում է UNECE-ի վիճակագրական օրենսդրության ղեկավար խմբի անդամ:

5.Քննարկված թեմաները՝

Ազգային վիճակագրական օրենսդրության նոր զարգացումներ, Պաշտոնական վիճակագրության իրավական մարտահրավերները՝ տվյալների հասանելիություն, փոխանակում, գաղտնիություն և տեխնոլոգիա, Վիճակագրական օրենսդրությունն ընդլայնվող իրավական տվյալների էկոհամակարգերում, Կապը վիճակագրական իրավական ակտերի և այլ օրենսդրության միջև, Տվյալների կառավարման շրջանակներ – պաշտոնական վիճակագրության հեռանկար, Փորձագիտական այլ խմբերի կողմից ներկայացված իրավական հարցեր և ցանկացած ի հայտ եկած խնդիրներ:

6.Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Հայաստանը սեմինարին ներկայացրեց «Գաղտնիության սկզբունքի իրականացումն Արմստատում» խորագրով շնորհանդես:

Սեմինարը տրամադրեց հարթակ պաշտոնական վիճակագրության իրավական և ինստիտուցիոնալ շրջանակների մոդեռնիզացման և ազգային վիճակագրական համակարգերի համար իրավական մարտահրավերներ ներկայացնող առաջացող խնդիրների քննարկման և փորձի փոխանակման համար:

Նախորդ նմանատիպ սեմինարը «Պաշտոնական վիճակագրության մասին» մոդելային օրենքի վերաբերյալ կազմակերպվել էր 2023թ. հուլիսի 4-5-ը Երևանում՝ EFTA-ի և UNECE-ի կողմից համատեղ՝ Արմստատի հետ սերտ համագործակցությամբ:

7.Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Վիճակագրական արտադրության կառավարման և իրավական շրջանակի բարելավումը հիմնարար նշանակություն ունի բարձ որակի վիճակագրություն արտադրելու համար և առաջնահերթություն է շատ երկրների համար: Մասնավորապես, փոփոխվող տվյալների լանդշաֆտի, տվյալների այլ արտադրողների և տվյալների նոր աղբյուրների ի հայտ գալու համատեքստում անհրաժեշտ է ճկուն և հեռանկարային իրավական հիմք՝ աջակցելու և հնարավորություն տալու ազգային վիճակագրական համակարգերին համապատասխանելու նպատակներին և շրջակա միջավայրին:
CES-ն աջակցել է իր անդամներին այս ոլորտում՝ EFTA-ի և Եվրոստատի հետ համատեղ մշակելով և հաստատելով «Պաշտոնական վիճակագրության մասին» մոդելային օրենքը (2016թ.) և վիճակագրական օրենսդրության մոդեռնիզացման ուղեցույցը (2019թ.): Համապատասխանեցվելով ՄԱԿ-ի պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքներին՝ փաստաթղթերը տրամադրում են ուղեցույց վիճակագրական օրենսդրության մշակման վերաբերյալ, որն անհրաժեշտ է վիճակագրական համակարգերի մոդեռնիզացմանն աջակցելու և պաշտոնական վիճակագրության ամբողջական արժեքը բացահայտելու համար:
Սեմինարին պայմանավորվածություն ձեռք բերվեց կազմակերպել իրավական և կառավարման փորձագետների կանոնավոր հանդիպումներ՝ շարունակելու աշխատանքն այս թեմայի շուրջ:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Մասնակցությունը սեմինարին հնարավորություն ընձեռեց ազգային վիճակագրական ծառայությունների ներկայացուցիչներին քննարկելու վիճակագրական օրենսդրության մոդեռնիզացման խնդիրները և մարտահրավերները, կիսելու պաշտոնական վիճակագրության իրավական և ինստիտուցիոնալ շրջանակների մոդեռնիզացման լավագույն փորձը:

9.Ստորագրությունը, ամսաթիվը՝

<< վիճակագրական կոմիտեի նախագահ Ստեփան Մնացականյան

03.06.2024թ.

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը - ՀՀ վիճակագրական կոմիտե

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը – Հայաստանի Հանրապետության Վարչապետի 15.05.24թ. թիվ 446-Ա որոշում

3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)

Ստեփան Մնացականյան – Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի նախագահ

(թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում)

4. Գործուղման վայրը - Ալբանիայի Հանրապետություն (Տիրանա)

5. Գործուղման ժամկետները՝ 2024թ. մայիսի 28-31-ը

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը - Եվրոպական ազատ առևտրի ասոցիացիա (EFTA)

(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)

ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ

---

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան)
(ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը)

☐ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

☐ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը	Անուն, ազգանուն	Անուն, ազգանուն	Անուն, ազգանուն	Անուն, ազգանուն	Ընդամենը (հազ. դրամ)

		1	2	3	...	
Ճանապար-հածախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)					
	Ավիատոմսի արժեքը (դրամ)					
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)					
	Վճարը 1 օրվա համար (դրամ)					
	Օրերի քանակը					
	Ընդամենը (դրամ)					
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)					
	Վճարը 1 օրվա համար (դրամ)					
	Օրերի քանակը					
	Ընդամենը (դրամ)					
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար					
	Մուտքի արտոնագրի վճար					
	Այլ ծախսեր (նկարագրել)					
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)						

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը, ամսաթիվը

Գլխավոր քարտուղար Ա. Հայրապետյան

03. 06 24